Պայմանագրի կողմ	Պատվիրատու
ՀՀ քաղաքացի Սիրանուշ Կառլենի Դավթյան ՀՀ, ք.Երևան, Բագրատունյաց 28/18 Անձ՝ BA2895120, տրվ. 05.04.2016թ.՝ 003-ի կողմից «Ինեկոբանկ» ՓԲԸ ՀՀ 2051052758417001	ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011000834 ՀՎՀՀ 02631263

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«07» «12 » 2018 թ
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.
Պայմանագրի համարը՝ « »

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «07» «12 » 2018 թ. դուրս գրված N _____հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	Տեխնիկական անբնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Թիվ 61200518 քրեական գործի հիման վրա հոգեբանական փորձաքննության իրականացում			1		07.12.2018թ	39.4	4-րդ եռամսյակ
	Ընդամենը						39.4	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

Ծառայությունը ընդունեց

ստորագրություն

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՀՀ քաղաքացի՝ Դավթյան Սիրանուշի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 18 թ. դեկտեմբերի 07-ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 18 թ. դեկտեմբերի 07-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Թիվ 61200518 քրեական գործի հիման վրա հոգեբանական փորձաքննության իրականացում	հատ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Դավթյան Սիրանուշ

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը ներկայացրած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

147

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
փորձագետ նշանակելու մասին

28.09.2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝ Տ. Կիրակոսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 61200518 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում կատարված համացանցի մշտադիտարկման արդյունքում 2018թ. փետրվարի 1-ին հայտնաբերված հոդվածի համաձայն՝ «medialab.am» խմբագրությունը լուրջ սպառնալիքներ է ստացել ֆեյսբուքյան օգտատիրոջ կողմից:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազությունն այդ մասին մամուլի հրապարակումների կապակցությամբ հանձնարարել է ոստիկանությանը՝ կատարել ստուգողական գործողություններ:

2018թ. փետրվարի 2-ին www.medialab.am կայքի գլխավոր խմբագիր Մարիաննա Գրիգորյանը հրավիրվել է ՀՀ ոստիկանություն, որտեղ հանցագործության մասին հաղորդում և բացատրություն է տվել այն մասին, որ 2018թ. հունվարի 28-ին իրենց կայքում տեղադրված ծաղրանկարի տակ կատարված մեկնաբանություններում «facebook» սոցիալական կայքի օգտատեր «Hayk Berman Ohanyan» օգտատերը սպառնացել և ակնարկել է, որ կայքի խմբագրությունը կարող է արժանանալ 2015թ. հունվարին ահաբեկչական հարձակման ենթարկված «Շառլ Էբդո» խմբագրության ճակատագրին, ինչից հետո իր անձնական էջին կատարված նամակագրությամբ նույն անձը ուղարկել է «մահ» նշանակությամբ սիմվոլ, սպառնալիքներ է հնչեցրել իր և ընտանիքի անդամների հասցեին: Նախկինում կայքում տեղադրված հրապարակումների կապակցությամբ պարբերաբար խմբագրությունը ստացել է տարբեր բնույթի սպառնալիքներ, սակայն դրանք լուրջ չեն ընդունել, իսկ այս սպառնալիքներն ընդունել է իրական և այդ օրվանից դստերը դպրոց չի տանում, ինքն էլ աշխատանքի չի գնում:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Hayk Berman Ohanyan» օգտատերը հանդիսանում է նախկին զինծառայող, 1977թ. ծնված Հայկ Բերմանի Օհանյանը: Վերջինս բացատրություն է տվել այն մասին, որ 1994-2015թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, պահեստազորի սպա է: 2018թ. հունվարի 28-ին՝ ՀՀ բանակի տոնին, www.medialab.am կայքում նկատել է «Բոշի ծաղիկները» վերնագրով ծաղրանկար, որում պատկերված է եղել ՀՀ ՊՆ Վիգեն Սարգսյանը, հետնամասում ոտքն անդամահատված զինվոր և նրան մեկ գուլպա ուղղած սպա, իսկ վերնամասում կատարված է գրառում. «Էս մի թայը քեզ հերիքա չէ՞, զինվոր»: Ծաղրանկարից վիրավորվել, վրդովվել ու կատարել է հիշատակված գրառումները: Իր գրառումները կյանքի կամ առողջության սպառնալիքներ չեն պարունակել, սպառնալու կամ իրականում Մարիաննա Գրիգորյանին հանդիպելու, նրան վնաս պատճառելու նպատակ չի ունեցել: Ֆրանսիական «Շառլ Էբդո» խմբագրության դեպքերը հիշատակել է, որպեսզի հիշեցնի, թե նման դեպքերն ինչերի են հանգեցնում

վրդովված ամբոխի մոտ, մատնանշելու համար, որ կարող են լինել մարդիկ, ովքեր կգնան այդ քայլին: Ամբողջ գրագրության նպատակը եղել է այն, որ զինվորին առնչվող ծաղրանկարը հեռացվի կայքից:

Նախապատրաստված նյութերի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազությունում 2018թ. փետրվարի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը կատարվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Մարիաննա Գրիգորյանը ճանաչվել է տուժող, ում անհատական առանձնահատկությունները, վերջինիս հասցեագրված հայտարարություններն իբրև իրական սպառնալիքներ ընկալելու, դրանց բովանդակությունից նրա մոտ վախի, տագնապի կամ թերարժեքության զգացողություն առաջանալու և հոգեբանության բնագավառի մի շարք այլ հարցեր պարզելու նպատակով 2018թ. օգոստոսի 23-ին նշանակվել է հոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնին:

Նշանակված փորձաքննությունը կատարելու համար ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնից առաջարկվել է հոգեբան Սիրանուշ Կառլենի Դավթյանի թեկնածությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ և 249-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով՝ ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնի կողմից առաջարկված թեկնածու՝ հոգեբան Սիրանուշ Կառլենի Դավթյանին /անձնագիր՝ BA 2895120/ նշանակել փորձագետ՝ հոգեբանական փորձաքննությունն իրականացնելու նպատակով:
2. Փորձագետին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և եզրակացություն տալուց խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության փոխգնդապետ՝ **Տ. Կիրակոսյան**

Սույն որոշման ծանոթացա,
Ստացա դրա օրինակը՝

Փորձագետ՝ Սիրանուշ Դավթյան

28.09.2018թ.